

Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

Այս փաստաթուղթը պատասխանում է SARS-CoV-2-ի, որն այն վիրուսն է, որ առաջացնում է COVID-19, հակամարմինների կամ սերոլոգիական թեստավորման վերաբերյալ հաճախակի տրվող հարցերին: Կարևոր է նշել, որ այս տեղեկատվությունը կփոխվի և կգարգանա, ուստի հաճախակի թարմացումների համար անպայման օգտվեք SARS-CoV-2-ի ստուգման վերաբերյալ այնպիսի ռեսուրսներից, ինչպիսիք են [FDA](#)-ի (ՄԴՎՎ) էջը:

1. Ո՞րն է տարբերությունը սերոլոգիական թեստի և ախտորոշիչ թեստի միջև:

Սերոլոգիական թեստերը չեն ախտորոշում COVID-19 ակտիվ վարակը, բայց կարող են տեղեկություններ տալ նախկինում ունեցած վարակի վերաբերյալ: Դրանք արյան ստուգումներ են, որոնք ստուգում են սպիտակուցների (հակամարմինների) առկայությունը, որոնք զարգանում են մարմնում, երբ մարմինը արձագանքում է վարակին: Մինչդեռ, ախտորոշիչ թեստերը մոլեկուլային թեստեր են, որոնց ժամանակ հիմնականում օգտագործվում է լաբորատոր մեթոդ, որը հայտնի է պոլիմերազային շղթայական ռեակցիա (ՊՇՌ) անունով, որը հայտնաբերում է հենց վիրուսի գենետիկական նյութը: Այս թեստերը կարող են ախտորոշել ակտիվ վարակները՝ սովորաբար քթից կամ կոկորդից վերցված քունկի նմուշի միջոցով:

2. Որքա՞ն ժամանակ է հարկավոր, որ վարակված անձը հակամարմիններ զարգացնի:

Սովորաբար մեկից երեք շաբաթ է տևում, մինչև COVID-19-ով հիվանդանալուց հետո որևէ անձի օրգանիզմը հակամարմիններ առաջացնի, որոշ մարդկանց մոտ կարող է նույնիսկ ավելի երկար տևել: Կախված մարդու վարակվելու և թեստավորման ժամանակից, սերոլոգիական թեստը կարող է հակամարմիններ չհայտնաբերել COVID-19-ով տվյալ պահին վարակված անձի մոտ:

3. Հնարավո՞ր է սերիոլոգիական թեստ օգտագործել, հայտնաբերելու համար, թե արդյո՞ք այս պահին COVID-19 ունեմ:

Ոչ: Սերոլոգիական թեստը չի կարող որոշել, թե արդյոք դուք ներկա պահին COVID-19 ունեք. այս թեստը չափում է հակամարմինները, որոնք ցույց են տալիս, որ մարմինը արձագանքել է վիրուսին, բայց չի կարող նշել, թե կա արդյոք ակտիվ վարակ: Վարակման սկզբնական օրերին, երբ մարմինը դեռ իր իմունային պատասխանն է կառուցում, հակամարմիններ կարող են չհայտնաբերվել, ինչը կարող է հանգեցնել կեղծ բացասական սերոլոգիական թեստի արդյունքների: Նմանապես, սերոլոգիական թեստերը կարող են դրական լինել, եթե անձը նախկինում վարակվել էր COVID-19-ով և ներկայումս վարակված չէ վիրուսով: Այդ պատճառով, սերոլոգիական թեստերը չպետք է կիրառվեն COVID-19 ախտորոշելու համար:

4. Արդյո՞ք սերիոլոգիական թեստերը որևէ դեպքում օգտակար են COVID-19-ի ախտորոշման համար:

Կան դեպքեր, որոնց ժամանակ կարող է օգտակար լինել սերոլոգիական թեստի կիրառումը՝ ի հավելում ախտորոշիչ թեստի: Եթե որևէ մեկի մոտ հետագա բարդություններ զարգանան, որոնք կարող են կապված լինել COVID-19-ի հետ, օրինակ՝ երեխաների մոտ բազմահամակարգ

Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

բորբոքային համախտանիշը (MIS-C), ապա սերոլոգիական թեստի դրական արդյունքը կօգնի կատարել ախտորոշումը: Եթե որևէ մեկը մի քանի շաբաթ տևողությամբ COVID-19-ի ախտանիշներն ունենա, սերոլոգիական թեստն օգտակար կլինի ի հավելու ախտորոշիչ թեստի՝ ախտորոշումն անելու համար: Եթե որևէ անձի մոտ եղել են ախտանշաններ մի քանի շաբաթների ընթացքում, ապա ախտորոշման համար կարող է օգտակար լինել շիճաբանական ստուգումը՝ ի լրացումն վիրուսային թեստավորման:

5. Որո՞նք են COVID-19-ի համար սերոլոգիական թեստեր անելու այլ պատճառները:

Այս թեստերն օգտագործվում են ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես է ժամանակի ընթացքում COVID-19 հարուցող վիրուսի նկատմամբ իմունային պատասխանը զարգանում և պարզելու հնարավոր վարակված մարդկանց թիվը կամ համաճարակի տարածման չափսերը: Երկարաժամկետ կտրվածքով, սերոլոգիական թեստը և կլինիկական ստուգումը հնարավորություն կտա ավելի լավ հասկանալ, թե արդյոք անձը, որն ապաքինվել է վարակից, կրկին վարակվելու ցածր վտանգի տակ է, եթե նորից վիրուսի հետ շփման ենթարկվի: Բայց ներկայումս դրանք չեն կարող մեզ տալ այդ տվյալները: Սերոլոգիական թեստերը կարող են օգնել մեզ նաև ավելի իմանալ այն մարդկանց մասին, ովքեր գուցե վարակված են եղել, բայց երբեք ախտանիշներ չեն ունեցել, քանի որ այդ անձինք նույնպես պետք է հակամարմիններ զարգացրած լինեն:

COVID-19-ի համար սերոլոգիական թեստեր անելու մյուս պատճառն է՝ գտնելու մարդկանց, ովքեր հակամարմիններ են զարգացրել և կարող են բավարարել արյուն նվիրաբերելու պահանջներին, որը կարող է օգտագործվել՝ ստեղծելու բուժանյութ COVID-19-ով ծանր հիվանդացած պացիենտների համար:

6. Կարևո՞ր է արդյոք, թե ինչ սերոլոգիական թեստ է օգտագործվել:

Մանդի և Դեղորայքի Ադմինիստրացիան (FDA) այժմ վերանայել է մի շարք սերոլոգիական թեստերի կատարողականությունը և թույլատրել դրանց օգտագործումը [Արտակարգ իրավիճակների ժամանակ օգտագործման թույլտվությամբ](#) (EUA). Խորհուրդ է տրվում, որ պացիենտների համար օգտագործվեն միայն EUA ունեցող թեստեր: Ի հավելում, շատ սերոլոգիական թեստեր, որ ժամանակին FDA-ի կողմից թույլատրվում էին վաճառվել, այժմ կորցրել են այդ իրավունքը և չպետք է կիրառվեն պացիենտների խնամիք համար:

7. Եթե իմ սերոլոգիական թեստի արդյունքը դրական է, կարո՞ղ եմ դադարեցնել դեմքի կտորե ծածկող միջոց կրելը կամ սոցիալական հեռավորություն պահպանելը:

Ոչ: Քանի որ մենք չունենք ոչ մի վերջնական տեղեկատվություն, որը ցույց է տալիս, որ COVID-19-ի հակամարմիններ ունենալը իմունիտետ է առաջացնում կամ կանխում է անձի նորից վարակվելը, հակամարմինների թեստի դրական արդյունք ունեցող մարդիկ պետք է շարունակեն պաշտպանել իրենց և մյուսներին COVID-19-ից: Կա նաև սերոլոգիական թեստի կեղծ դրական արդյունքների հնարավորություն, ուստի պահանջվում է, որ բոլորը շարունակեն անձնական պաշտպանության գործառույթները, ինչպիսիք են՝ սոցիալական հեռավորության պահպանումը, ուրիշների

Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

Չրջակայքում լինելիս դեմքի կտորե ծածկոց կրելը և հաճախակի ձեռքերը լվանալը, նույնիսկ եթե նրանք սերոլոգիական թեստի դրական արդյունքներ ունեն: